ՀՀ Շրջակա միջավայրի նախարար
պարոն Էրիկ Գրիգորյանին
Գոհար Ղազինյանից
(հասցե՝ Զավարյան 64, բն 10, հեռ.՝ 099 20 51 60
e-mail: gohar_ghazinyan@yahoo.com)

ԴԻՄՈՒՄ՝

բնության և շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ

Հարգելի պրն Նախարար,

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Ընդ որում, նույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով օրենքը բացառում է տեղեկատվության տրամադրման մերժումը, եթե դա ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բնության և շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում տիրող իրական վիճակը:

Ստորև հղումով ներկայացված ՄԱԶԾ ծրագիրը, որը, ինչպես նշված է ՄԱԶԾ պաշտոնական փաստաթղթում, իրականացվել է ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից: Խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1. ՀՀ Բնապահպանության նախարարության որ ստորաբաժանում է իրականացրել նշված ծրագիրը;

2. Ով է եղել նշված ծրագրի Ծրագրի Ղեկավարy – Project Manager.

https://www.thegef.org/sites/default/files/project_documents/Proj%2520Doc%2520-%2520Armenia%2520country%2520study%2520on%2520climate%2520change.pdf

Կանխավ շնորհակալ եմ, Հարգանքով Գոհար Ղազինյան
16 հունվարի 2020